# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Կոնցեռն-Էներգոմաշ ՓԲԸ-ն ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/60 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | |
|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 12 | BS-040102-A13 | UVC/T-AR, PCR cabinet | Biosan | Մաքուր պահարանը նախատեսված է այնպիսի նմուշների հետ աշխատելու համար, ինչպիսիք են ԴՆԹ/ՌՆԹ պարունակող նմուշները: Ունի ուլտրամանուշակագույն լամպ պարբերաբար ախտահանման համար: Այն հարմար է լաբորատոր սեղանի վրա տեղադրելու համար: Ունի մետաղական կարկաս, պատերը՝ պլեքսիգլաս, ներկված էմալե մակերեսներ: ՈՒՄ լամպը ախտահանում է աշխատանքային տարածքը 15-30 րոպե ազդեցության ընթացքում, որը կարգավորվում է թվային ժամանակաչափով՝ քայքայելով առկա ԴՆԹ/ՌՆԹ հատվածներ: Ունի լուսային լամպ՝ ապահովելու պատշաճ լուսավորություն: Հագեցած է հոսքային տիպի մանրէասպան ուլտրամանուշակագույն մաքրող-ռեցիրկուլյատոր AR համակարգով, որն ապահովում է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | պահարանում մշտական ախտահանում աշխատանքի ընթացքում: Համակարգը բաղկացած է ՈՒՄ լամպից, օդափոխիչից և վերջին սերնդի ֆիլտրերից և ունի այնպիսի տեղադրություն, որի աշխատանքի ժամանակ շահագործողը պաշտպանված ` ՈՒՄ ճառագայթների ազդեցությունից: Օդի վերաշրջանառությունը մեծացնում է ուլտրամանուշակագույն լույսի առավելագույն ազդեցությանը` այն դարձնելով բավականաչափ արդյունավետ աղտոտիչ ԴՆԹ/ՌՆԹ մոլեկուլների քայքայման համար: ՈւՄ լամպերը ունի միջինը 9000 աշխատանքային ժամ: Պահարանը պետք է ունենա ավտոմատ անջատման համակարգ ՈւՄ լամպի անջատման, երբ պահարանը բացվի: Աշխատանքի ընթացքը ապահովվում է ցածր աղմուկով և էներգիայի սպառմամբ: Պատերի նյութը` պլեքսիգլաս. պոլիմեթիլ մետակրիլատ ALTUGLAS EX, Աշխատանքային մակերեսի նյութ` չժանգոտվող պողպատ` քիմիական նյութերի նկատմամբ բարձր դիմացկունությամբ: Բաց ՈՒՄ լամպ` 1 x 25Վ ներկառուցված պահարանում (մանրէասպան UV-C, TUV 25W 1SL/25), ՈւՄ ճառագայթման մակարդակ` 18 մՎտ/սմ2/վրկ Ճառագայթման տեսակ` ՈւՄ (λ = 253.7 նմ), օզոնից զերծ Ուղիղ ՈւՄ ճառագայթման թվային ժամանակի կարգավորում` 1 րոպեից 24 ժամ, ավելացման քայլը` 1 րոպե, ՈւՄ-վերաշրջանառող 1x25Վ (արդյունավետություն >99%/ժամ) Ցերեկային լուսային լամպ (աշխատանքային տարածքի լուսավորության համար) 1 x TLD-15Վ, Կողային վահանակների հաստությունը` առնվազն 4 մմ Վերին առջևի վահանակի հաստությունը` առնվազն 8 մմ, Օպտիկական |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | թափանցելիություն՝ առնվազն 92%, ՈւՄ պաշտպանություն >99.90%, Աշխատանքային տարածք՝ 645 × 490 մմ Բացման չափսեր (ամբողջությամբ բարձրացված պաշտպանիչ էկրան)՝ 645 × 165 մմ Պահարանի ներսում գտնվող էլեկտրական վարդակներ՝ էլեկտրական լարերի մուտք Ընդհանուր չափսեր (Լայնություն x Խորություն x Բարձրություն)՝ 720 × 535 × 555 մմ Քաշ՝ առնվազն 23 կգ Էներգիայի սպառում՝ 67 Վտ Նոմինալ աշխատանքային լարում՝ 100-240 Վ, 50/60 Հց Ապրանքը եվրոպական արտադրության, բարձր որակի, նոր, չօգտագործված, չի պարունակում կիսամաշ դետալներ, իսկ փաթեթը՝ չվնասված և ապահովված համապատասխան պահպանման պայմաններով մատակարարման ամբողջ ընթացքում: Մատակարարումը և տեղադրումը, ինչպես նաև անհրաժեշտ միացումները իրականացվելու են մատակարարի կողմից: Առկա է արտադրողի հավաստագիրը, և մատակարարվի ստուգաչափված վիճակում՝ առկա բոլոր փաստաթղթերով: Տեղադրելուց և աշխատանքային վիճակի բերելու հետո երաշխիք 1 տարի: Մատակարարումից առաջ համաձայնեցնել պատվիրատուի հետ: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Концерн-Энергомаш ЗАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/60 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | |
|---|---|---|---|---|
| | фирменное наименование | марка | наименование производителя | технические характеристики |
| 12 | | | | |